ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-22/5

ք. Երևան «22» «03» 2022թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀԵՔՍԱԴԱ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Տիգրան Աֆրիկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում տեսադիտման, տեսահսկման արդի համակարգի ներդնման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __15__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված է **15** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները

Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011029445
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
Ա. Ղազարյան
_____
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՀԷՔՍԱԴԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Նարեկացի 54, բն. 66
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570025927540100
ՀՎՀՀ 0871497

Տնօրեն _____ Տ. Աֆրիկյան
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 1
« 22 » « 03 » 2022 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-22/5 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71241200/501	ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում տեսադիտման, տեսահսկման արդի համակարգի ներդնման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ, համաձայն **հավելված 1-ի:**	ՀՀ դրամ	1200000	1	Արթիկ ՔԿՀ – Շիրակի մարզ, գ. Հառիճ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրվա ընթացքում

Հավելված 1

ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում տեսադիտման, տեսահսկման արդի համակարգի ներդնման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը պլանավորում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում ներդնել արդի սարքավորումածրագրային համակարգ, մասնավորապես՝ տեսահսկման համակարգի ներդնման գործընթաց, որի կապակցությամբ անհրաժեշտ է իրականացնել մասնագիտացված և նմանատիպ փորձ ունեցող ընկերությունների կողմից խորհրդատվության, սարքավորումածրագրային համակարգի, պլանավորվող աշխատանքների և համակարգի բաղկացուցիչ մասերի տեխնիկական փաստաթղթերի պատրաստում և նախագծում:

ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի ընդհանուր տարածքը կազմում է շուրջ 9.5 հա., իսկ բնակելի շինություններինը՝ մոտ 3,300 մ^2 (հասցե՝ Շիրակի մարզ, գ. Հառիճ):

Նախատեսվում է, որ տեսահսկման համակարգն իր մեջ ներառելու է միջազգային չափորոշիչներին համապատասխանող բարձր որակական և տեխնիկական հատկանիշներով օժտված տեսախցիկներ, որոնց ընդհանուր քանակի մեջ պետք է ներառված լինեն նաև գիշերային տեսանելիության, ինֆրակարմիր և ջերմային ցուցիչներով տեսախցիկների տեղադրում, տեսահսկման թվային տվյալների հիշողության պահոցներ (տեղադրման ենթակա անհրաժեշտ քանակի վերաբերյալ պահանջվում են նեղ մասնագիտական հաշվարկներ), ինչպես նաև տեսահսկման անվտանգության համակարգի կառավարման վահանակներ, մոնիտորներ (կահավորված օպերատիվ կառավարման կենտրոն):

Անվտանգության և տեսահսկման համակարգի՝ տեղեկատվության կապուղիների անցկացումն իրականացնելիս (տեսախցիկի կամ հիշողության կրիչի մալուխներ) բոլոր շինմոնտաժային աշխատանքները պետք է իրականացվեն հաշվի առնելով տեսախցիկները և կապուղիները քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող և այլ անձանց կողմից վնասելու (շարքից հանելու) հնարավորությունը բացառելու սկզբունքը: Նախագիծը պետք է ներառի՝ հստակ գծագրեր, տեղայնացված կապուղիների միասնական համակարգ, տեսախցիկների թե տեսակային և թե քանակային բացվածքներ, նրանց տեղադրման հնարավոր վայրեր և այլ մասնավորեցնող տվյալներ:

Որպես պարտադիր նախապայման՝ քրեակատարողական հիմնարկում կահավորվելիք օպերատիվ կառավարման կենտրոնը պետք է հնարավոր լինի վերահսկել (կառավարել) նաև քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում (հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 63) կահավորված

օպերատիվ կառավարման կենտրոնական կայանից (ՕԿԿԿ)՝ օգտագործելով առկա սարքավորումածրագրային համակարգը և տեղադրելով միայն լրացուցիչ կառավարման վահանակ ու մոնիտորներ: Հարկ է նշել նաև, որ քրեակատարողական հիմնարկների և ՔԿԾ կենտրոնական մարմնի միջև տեղեկատվական կապուղիներն արդեն իսկ առկա են:

Նախագծանախահաշվարկային ծառայությունների պատշաճ մատուցման և ակնկալվող արդյունքների համար կարևոր նշանակություն ունի տվյալ աշխատանքները (ծառայությունները մատուցող) կատարող ընկերության աշխատանքային փորձը, նեղ մասնագիտական ուղղվածությունը, նմանատիպ աշխատանքների իրականացման վերջնական արդյունքը:

Նախագծանախահաշվարկային ծառայություններ մատուցող ընկերության կողմից, որը պետք է ունենա ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված համապատասխան լիցենզիա, հստակ պետք է իրականացվեն և նախագծանախահաշվարկային աշխատանքների ընթացքում պետք է պահպանվեն հետևյալ պահանջները.

1. Նախագծանախահաշվարկային աշխատանքները պետք է իրականացվեն տեղանքի՝ շենք-շինությունների, կոնստրուկտիվ կրող տարրերի և եղանակային պայմանների մանրակրկիտ ուսումնասիրմամբ՝ ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ այցելություններ կազմակերպելու եղանակով:
2. Իրականացված նախագծանախահաշվարկային աշխատանքների արդյունքում համակարգը պետք է նախագծվի որպես միասնական համալիր, որը հնարավոր կլինի ղեկավարել համապատասխան ծրագրային ապահովմամբ:
3. Նախագծանախահաշվարկային փաստաթղթերը Քրեակատարողական ծառայությանը պետք է տրամադրվեն թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ հայերեն և ռուսերեն լեզուներով (մոնտաժային աշխատանքների թվային պատկեր, կապուղիների և անցուղիների թվային քարտեզ):
4. Նախագծային փաստաթղթերում պետք է հստակ տարբերակված լինեն տեսահսկման համակարգի կոմպոնենտների (բաղադրիչ տարրերի) տեղադրման վայրերը, միմյանց կապող կապուղիները, կառավարման կենտրոնների կահավորանքը և հնարավորությունները, օգտագործված (օգտագործվող) սարքավորումների տեսակները (հստակ մակնշմամբ՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանող տեխնիկական բնութագրեր, յուրաքանչյուր սարքավորման այդ թվում՝ օժանդակ սարքերի, նյութերի, կահավորանքի տարանջատված շուկայական արժեքները):

5. Նախագծերում պետք է ներառված լինեն համալիրի (ընդհանուր համակարգ) ներդնման շինմոնտաժային աշխատանքների ծավալը, ժամանակատարությունը և շուկայական արժեքը:
6. Համալիրը պետք է նախագծվի իսպառ բացառելով քրեակատարողական հիմնարկի վարչական տարածքի և անազատության մեջ պահվող անձանց բնակելի տեղամասերի չհսկվող տարածքների առկայությունը (անտեսանելի վայրեր՝ մեռյալ գոտիներ): Ընդ որում՝ տեսադիտման և տեսահսկման տիրույթը պետք է ներառի նաև արտաքին պահպանության պարագիծը թե ներսից և թե դրսից՝ փախուստի կամ ներնետման հնարավոր դեպքերը ժամանակին հայտնաբերելու համար:
7. Համալիրը պետք է օժտված լինի քրեակատարողական հիմնարկում առկա լոկալ տեղեկատվական ցանցին համակցվելու հնարավորությամբ:
8. Համակարգի նախագծման ժամանակ պետք է նախատեսվի նաև հետագա արդիականացման, ընդլայնման պարզունակ հնարավորություն (օրինակ՝ հավելյալ հիշողության պահոցների, տեսադիտման, տեսահսկման սարքերի ավելացում):
9. Համալիրի կառավարման ծրագրային ապահովումը պետք է օժտված լինի վերլուծական, ազդարարման, ձայնագրման և ձայնագրումների վերհանման հնարավորությամբ:
10. Տեսահսկման, տեսաձայնագրման և պահպանման սարք-սարքավորումները պետք է համակցվեն Քրեակատարողական ծառայությունում առկա համակարգչային սարքավորումների օպերացիոն համակարգերի հետ (Windows) և ապահովեն տեսահսկման և տեսաձայնագրման 24-ժամյա ռեժիմ՝ առնվազն 16 օր պահպանման հնարավորությամբ:
11. Համակարգի կառավարման ինտերֆեյսը պետք է լինի հնարավորինս պարզ, հայերեն կամ ռուսերեն լեզուների կիրառման (օգտագործման) հնարավորությամբ:
12. Հաշվի առնելով հիմնարկներում իրականացվող ծառայության առանձնահատկությունները՝ նախագծանախահաշվարկային աշխատանքները պետք է իրականացվեն Քրեակատարողական ծառայության համապատասխան ստորաբաժանման (կամ աշխատակցի՝ ըստ վերաբերելիության) հետ համագործակցելով՝ ընթացքում առաջ եկած պահանջների և առաջադրանքների համաձայնեցմամբ:

13. Համակարգի ծրագրային ապահովումը պետք է օժտված լինի ոչ ստանդարտ իրավիճակներ արձանագրելու կամ արգելագոտու պարագծի խախտման և նմանատիպ արտառոց դեպքերում ինչպես պահակախմբին, այնպես էլ վերահսկիչ կենտրոնին, այդ թվում նաև համապատասխան օգտատերին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցելու հնարավորությամբ, միաժամանակ՝ արտապատկերելով իրադարձությունը ՕԿԿ-ում (օպերատիվ կառավարման կենտրոն) տեղադրված մոնիտորների վրա:
14. Համակարգը պետք է իրականացնի իրավիճակի շարունակական, շուրջօրյա մոնիթորինգ՝ մեկ մոնիտորի վրա առնվազն 64 առանձնացված պատկերներ արտապատկերելու՝ ցուցադրելու հնարավորությամբ (նախատեսվում է համապատասխան անկյունագծով մոնիտոր):
15. Բոլոր տեսաձայնագրությունների հոսքերը պետք է հավաքագրվեն համապատասխան սերվերներում, ինչով և կապահովվի օգտատեր-սերվեր-տեսախցիկ կապը, այլ ոչ թե օգտատեր-տեսախցիկ անմիջական կապով, ինչը կբեռնաթափի կապուղիների արագությունը (traffic):
16. Անվտանգության համակարգի մեկ կոմպոնենտի խափանման դեպքում համակարգը պետք է օժտված լինի ավտոնոմ (ինքնուրույն) այդ հանգույցը հայտնաբերելու, մեկուսացնելու և համապատասխան պահուստային ռեսուրսի հաշվին ապահովի ողջ համակարգը անխափան աշխատանքի ապահովման հնարավորությամբ:
17. Տեսադարանի արխիվացումն իրականացվում է ավտոմատացված կամ պլանավորված ժամանակահատվածում:
18. Տեսադիտման-տեսահսկման համակարգը, մասնավորապես՝ տեսախցիկները պետք է օժտված լինեն ինքնուրույն ուսուցման ծրագրային վերլուծության առանձնացված օբյեկտների դասակարգման (մարդ-առարկա) առանձին օբյեկտների նույնականացման հնարավորությամբ:
19. Տեսաձայնագրությունների պահման պահոցները (հիշողության պահպանման կոշտ սկավառակներ) պետք է համապատասխանեն առնվազն RAID6 ստանդարտին:
20. Ծրագրային ապահովումը պետք է լինի հնարավորինս ճկուն և հարմարավետ օգտատիրոջ համար: Ապահովի օգտատերերի պահանջներին համապատասխան պատկերների դասավորվածության փոփոխության հնարավորություն, միանգամից մեկ տեսախցիկի պատկերի ցուցադրման հնարավորություն՝ մի քանի օգտատերերի պատուհաններին:

21. Իրական ժամանակում տեսադիտարկում իրականացնելու ընթացքում նախորդող 30,60,90 վարկյան առաջ արխիվացված իրադարձությունների դիտում:
22. Ամբողջ համակարգը պետք է կառուցված լինի IP թվային ստանդարտով:
23. Արխիվացված տվյալների վերհանման հնարավորություն տարբեր ֆորմատներով (AVI. mpeg4 և այլն):

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011029445
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն՝
Ա. Ղազարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՀԷՔՍԱԴԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Նարեկացի 54, բն. 66
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570025927540100
ՀՎՀՀ 0871497
Տնօրեն՝ Տ. Աֆրիկյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«22» «03» 2022 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-22/5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/501	ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում տեսադիտման, տեսահսկման արդի համակարգի ներդնման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն												

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011029445
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն
Ա. Ղազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՀԷՔՍԱԴԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Նարեկացի 54, բն. 66
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570025927540100
ՀՎՀՀ 0871497
Տնօրեն Տ. Աֆրիկյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
« 22 » « 03 » 2022 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-22/5 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 22 » « 03 » 2022 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-22/5 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն